

ՆԵՐՏՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՒՆԱՆԻՍՏԻԿԱՆ

Թատրոնական ներկայացումները մեր մէջ.
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գեղարուեստական աշ-
քօմ. Հայկական երեկոյթը Բաքուում. Մեր ցա-
ւերից. Նամակ իմրագրութեան. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.
—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
—ԱՆԱՍՏՐԱՅԱՆ. Իմ ակոյեանք:

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԵՐ ՄԵՋ

Ձեռնվայ ընթացքում մեր մանրամասն
տեղեկութիւններ տուինք Թիֆլիսում տե-
ղի ունեցող Հայոց ներկայացումների մա-
սին: Մի ժամանակ նոյն մանրամասնու-
թիւններով մենք խօսում էինք Բաքուի
Հայկական ներկայացումների մասին: Թէ
այնտեղի եւ թէ այստեղի ներկայացում-
ներին մենք վերագրում էինք որոշ կազ-
մակերպող եւ առաջնորդող բնաւորութիւն,
որովհետեւ նրանց մէջ էին պարունակված
Հայոց բեմի առաջադիմող տարրերը: Այդ
ներկայացումներով պահպանվում էր Հայոց
բեմը, մի տեղ էին գտնւում մեր ա-
ռաջնակարգ բեմական ոյժերը, խրատու-
մունքը եւ թէ նոր պիեսների երևալը եւ
թէ ամբողջ թատրոնական գործի նպա-
տակայարմար եւ հաստատ կազմակերպու-
թիւնը:

Այն, ինչ որ մշակվում էր եւ դառնում
Հայոց բեմի սեփականութիւն Բաքուում եւ
Թիֆլիսում՝ նա դառնում էր ժողովրդու-
թիւն առհասարակ Հայոց թատրոնի հա-
մար: Դերասանները ամառվայ ամիսնե-
րում, շրջելով գաւառական քաղաքներում,
հաղորդում են գաւառացի Հային այն,
ինչ որ նրանք ձեռք են բերել կենտրոնա-

կան բեմում: Դերասանի նոր հմտութիւնը
եւ կատարելագործութիւնը, բեմականութեան
թատրոնական նոր գրեւծներով ձեռնա-
նայր՝ միայն կենտրոնի բաժինը չեն դառ-
նում, այլ տարածվում են այն բոլոր տե-
ղերում, ուր յարմարութիւններ կան ներ-
կայացումներ տալու:

Թատրոնը որոշ բարոյական դեր ունի
կատարելու հասարակութեան զարգաց-
կան ասպարէզում, եւ պէտք է ջանք գործ
գնել, որ նրա բարեբար ազդեցութիւնը
կարելի չի չափ շուտով մոտեց գործէ մեր
ազգայնականութեան մէջ: Դաւառներում
թատրոնական ներկայացումներ տեղի են
ունենում միայն գաւառական մի քանի
քաղաքներում եւ երբեմնապէս մեծ աւան-
ներում: Իսկ ընդհանրապէս բեմական խօս-
քը եւ գրամատիական տեսարանը դեռ
անյայտ են մեր ժողովրդին. իսկ թատ-
րոնը կարող է այնպիսի խոր ազդեցու-
թիւններ թողնել իր ներկայացրած պիես-
ներով, որ երկար ժամանակ չեն մոռացվի
ժողովրդի յիշողութիւնները նրա ցոյց
տուած պատկերները եւ նրա քայրոզած
մտքերը:

Այդ պատճառով մենք համակրութեամբ
ենք վերաբերվում այն ճանապարհորդու-
թիւններին, որ կատարում են մեր գե-
րասանական խմբերը դէպի գաւառները, եւ
միայն մի ցանկութիւն ենք յայտնում, որ
նրանք այնտեղ էլ, գաւառական խուլ ան-
կիւններում, բարեխիղճ կերպով վերաբե-
րվեն իրանց գործին, չը կարծելով թէ կա-
րելի է գաւառացուն կերակրել ամեն մի
միջակ բանով, եւ միջոցներ ձեռք առնել
կարելի չի չափ հանրամատչելի դարձնել
թատրոնը չափաւոր գներով: Եւ անկախ-
կած, պիեսների վերաբերութեամբ ան-

հրաժեշտ է որոշ ընտրողութիւն, որով-
հետեւ կան պիեսներ, որոնք հետաքրքրու-
թիւն չեն կարող ունենալ գաւառում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՐՈՒՆԵՍՏԱԿԱՆ ԱՐԾՐՈՒՆ

Ստացանք Պետերբուրգում տպւած Գեղա-
րուեստական Ալբոմ Ե. Յ. Այվազովսկու յիշա-
տակին, որ նոր լոյս տեսաւ պ. պ. Ե. Բաղ-
դասարանցի եւ Դ. Օքոյանցի խմբագրու-
թեամբ:

Դա մեծ քառաձայ դիրք ունեցող մի գիրք
է, որի արտաբերքը վերին աստիճանի գեղեցիկ
ուպատրուէին է թողնում, սկսած պարզ,
զեկազեկապէս ոճով չինած կազմից: Տպւած
է գիրքը գեղեցիկ հաստ թղթի վրա եւ պարու-
նակում է իր մէջ բազմաթիւ պատկերներ եւ
նկարներ: Գեղարուեստ ասելով, հրատարակիչ-
ները հասկացել են միայն նկարչութիւն եւ ե-
րաժշտութիւն, այդ երկու ճիւղերին էլ նուիր-
ված է գիրքը: Նկարչութեան բաժին մէջ դր-
ված են ռուս եւ հայ յայտնի նկարիչների պատ-
կերները, իսկ երաժշտութեան բաժնում տեղ-
ված են 9 հատ զանազան երաժշտական կոոր-
ներին նուաններ, որոնցից մի քանիսը ռուսներն
են եւ երկուսը—«Լուսն գութանի հոտով» եւ
«Մի լար, բլրեր» հայերէն: Կայ նաեւ պ. Ե.
Տիգրանեանի միանգիւյս պարը: Բացի այս բո-
լորից Գեղարուեստական Ալբոմը մէջ տպւած
են զանազան նկարիչների գործերի պատճէ-
ններ:

Հնդհանուր առմամբ հրատարակութիւնը ար-
ժանի է Գեղարուեստական Ալբոմ անուն
եւ կարող է սեղանի զարդ դառնալ:

Ախոսեմ միայն, որ գրական բաժինը շատ
թույլ է, միամիտ եւ չափազանց մակերեսային:

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ԻՄ ԱՌՈՅՆԱՆԸ

(Ուսուցչի յիշատակարանից)

Ընկերներս զուր չէին գրել իմ անունաւ «Թա-
փառական»: Ամառային արձակուրդների ժա-
մանակ, երբ ես ազատվում էի ամբողջ ինն
երկար ու ձիգ ամիսների տաճանների աշխա-
տանքից, զանաքանական փոփոխ, երկաթեայ
վառարանների ծխից ու բարեհոգի քաղաքա-
ցիների անվերջ բամբասանքներից, իմ առա-
ջին գործը լինում էր հիմնովին կերպարանա-
փոխվել ու, առանց մի օր անգամ դանդաղե-
լու, վաղ տալ գիւղերը: Երկրպարանափոխվելը
ասելով, անշուշտ, ոչ ոք չի հասկանայ, որ ես
կարողանում էի փոխել կերպարանքիս այս
կամ այն մասերը, որոնք, աւանդ, անփոփոխե-
լի են,—թէ ես գտեց չափերի վերաբերմամբ
ինչպիսի արժանի փոփոխութեան,—այլ փոխում
էի այն, ինչ որ պարտաւորական է ուսուցչի
համար հազնել քաղաքում եւ ինչ որ ես ատում
էի ամբողջ օրս: Զից կարած գունատուր,
ուրախ չափկի մէջ ես շատ աւելի լաւ ու ա-
զատ էի զգում ինձ, քան զանազան սխրտուկ-
ների, պիղծակների ու ժիլետների մէջ:

Շրջում էի ես գիւղերն առանց որեւէ նը-
պատակի: Շրջում էի ոչ հնութիւններ հետա-
զօտելու կամ նկարագրելու, ինչպէս անում
են հնասէրները, ոչ ժամբով նստելու եւ տըխ-
րելու անցեալի որեւէ մեռած, անկենդան յի-
շատակարանի առաջ, ինչպէս անում են լաց-
կանները,—կանգուն, կիսականգուն եւ բոլոր-
վին կործանված եկեղեցիների, բերդերի եւ այլ
աւերակների մօտից եւ շատ անգամ անցնում
էի անտարբերութեամբ:—այլ շրջում էի այն-
տեղ, որտեղ շատ քիչ կամ բոլորովին չը կային
մեռելութեան վկաներ, բայց զոր փոխանակ
կային կենդանութեան,—կային կեն-
դանի ու աշխոյժ մարդիկ, կենդանաւոր ու

զով օր, կենդանաւոր, սառն ու կարկաչուն
աղբիւրներ, լայնաբաժակ դաշտեր՝ ծածկված
զմրուխտ—արտերով, ցողապատ մարգագետին-
ներ առաւօտեան պարզ ու պայծառ արեւի տակ:

Միտում էի ես կանգ առնել ճանապարհի կի-
սին գութանաւորների մօտ, դիտել նրանց աշ-
խատանքը, լսել նրանց անոյշ երգերը, խօսել
նրանց հետ օրվայ չարի ու բարու մասին,
ապա մի կտոր հաց կտրել նրանց արդար վա-
տակից, նրանց սեւ, բայց համեղ հացից ու
անցնել—գնալ, չարունակել ճանապարհու:

Միտում էի ես մտնել գիւղերը, հարցուփորձ
անել մեծին ու փոքրին՝ նրանց կացութեան,
նրանց ուրախութիւնների ու տրտմութիւննե-
րի, գիւղական հին ու նորի մասին, սովորել
գիւղացիներից այն, ինչ որ գիտեն նրանք ի-
րանց դարաւոր փորձից, եւ սովորեցնել ինչ որ
գիտէի եւ կարող էի ես. մնալ մի քանի օր
առաջին պատանած գիւղացու հիւրընկալ յար-
կի տակ, ոտի տակ տալ երբեմն գիւղական
պարապ ջահէլների հետ սար ու ձոր, դաշտեր
ու անտառներ եւ ապա ճանապարհորդական
թեթեւ պարկառուած՝ ուղղել քայլերս գէպի
մի այլ անձնաօթ գիւղ:

Միտում էի ես մանաւանդ բարձրանալ լեռ-
ներն, այնտեղ՝ ուր ամառն ամեն մի թզաչափ
տարածութիւն ներկայացնում է դրախտից
պոկված մի կտոր, ուր ամեն կողմից լսվում
են ոչխարների ու գառների, հովիւների ու
տաւարածների սարուտը կանանց ու աղջիկնե-
րի ձայները, որ շատ անգամ բառանկար
մային, սրնգի կլկոցն են հովուի տաղերը,
հների հաղորդ ու մօտիկ անտառի արձագանգն
այնպէս խառնվում են իրար, որ արեւմտին
դեռ երկու-երեք վերստ հեռուից՝ ես իմանում
էի, որ այնտեղ սարուտներ կան եւ ուրախ-
ուրախ գիմում էի զէպի նրանց վրանները:
Այն, որքան քաղցր էին այն օրերը, որ ես
անց էի կացնում այդ վրաններում, այդ բարձր
ու հազիւ մատչելի սարերի գլխին:

Եւ ինչ հարկաւոր էր ինձ ընտրած ու ծը-
րացրած նպատակի, դրանք բոլորն էլ մէկ-
մէկ նպատակ էին ինձ համար: Այն, ընկերներս

Այսպէս, օրինակ, խմբագրութիւնը առանց այլ-
հայտնութեան ասում է առաջաբանի մէջ. «Ան-
ցած 19-րորդ դարում գեղարուեստական աշ-
խարհը մարդկութեանը տուեց երեք մեծ եւ ու-
ժեղ տաղանդներ. երաժշտութեան աստուած
Լուչովիկոս Վան Բէթովն, գրականութեան
մէջ՝ կենեքի մեծ վարդապետ Լ. Տօլստոյ եւ
ծովային նկարչութեան անմահ երգիչ՝ Վեռմի-
կախարդ» Ե. Յ. Այվազովսկին: Այս նախա-
դասութիւնը ցոյց է տալիս, թէ որքան երե-
կայական հատկացողութիւններով զեկապար-
վող խմբագրութիւն է հրատարակել այդ աշ-
քօմը: Երեւի պ. պ. խմբագրներին յայտնի չէ,
որ 19-րորդ դարում էին ապրում Գէօքչի, Բա-
յալընը, Հիւզօնը, Զիլա եւ, որ Այվազովսկին
հռչակված նկարիչ էր, որ նա ունէր խոշոր
տաղանդ. բայց վերցնել միայն նրա անունը
մի դարի ընթացքում, որ տուել է շատ աշ-
խարհահռչակ նկարիչներ, թէ անհամեմատ-
թիւն է եւ թէ չօլինիլով:

Գովում ենք հրատարակողներին, որ նրանք
եռանդ ու ընդունակութիւն են ունեցել մի
իսկապէս գեղեցիկ հրատարակութիւն լոյս հա-
նելու համար: Հրատարակութեան արտաքին
արժանաւորութիւնների կողմից մենք աւելի
պահանջելով անարդարութիւն կը համարէինք:
Բայց շատ լաւ կը լինէր, եթէ գրական մասի
խմբագրութիւնը յանձնված լինէր աւելի ձեռն-
հաս եւ հմուտ անձինքների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԲԱԳՈՒՄ

Ամեն տարի տեղի է ունենում այստեղ երե-
կոյթ յօդուտ մարդաբերական ընկերութեան.
այդ երեկոյթը վաղուց է վեր կոչվել է հայ-
կական երեկոյթ. երկու տարի է միայն, որ
հայկական բառը, չը գիտեմ ինչու, դուրս է
չլրարւում: Այդ օտարոտի չէր թուի, ի հարկէ,

էին «Բափուկ կուլ չը տալ» ուսուցչական հա-
ցը: «Բափուկ կուլ տալ» ոճը յաճախ գործ
էր անում օրիորդ Մարիամը, երկու քոյրերից
մեծը,—մի լուրջ, ծանրաբարոյ, 27—28 տա-
րեկան, թխաղէմ, փոքր ինչ տղա, միջնաւանակ
աղջիկ, որի գեղեցկութիւնը սակայն ամբողջ-
վին ամփոփված էր նրա անսահման բարի եւ
զգայուն սրտի մէջ:

Առաւօտից մինչեւ երեկոյ նա զբաղված էր
դպրոցական գործերով: Շուտաւ ու սահուն
քայլերով անցնում էր նա դասարանից դասա-
րան, ինչում ուսումնարանի դաւիթը, բարձ-
րանում ուսուցչական սենեակը, մտնում ա-
ղախնի կացարանը եւ ամեն տեղ մի բան կար-
դարձում, մի պատուէր տալիս, հոգում շատ
անգամ մի բան, որ խուսափել էր բոլորի աշ-
փից: Հոգաբարձու, ուսուցիչ—ամենքը յար-
գում էին նրան, բայց առանձին սէր ու յար-
գանք նա վայելում էր աշակերտութիւնների,
մանաւանդ չքաւոր ու որը աշակերտութիւնների
կողմից, որոնց օգնելու համար նա չէր խնայ-
ում ոչ մի, նոյն-իսկ իր ուժերից բարձր աշ-
խատանք:

Աշխատային անձնանքի ժամանակ, երբ քա-
ղաքի փողոցները ծածկվում էին խոր, անսա-
ցանկի ցեխով, օրիորդ Մարիամին կարելի էր
տեսնել այնպիսի նեղ ճրուշաններում, ուր
ձիաւորն անգամ գուցէ սիրտ չանէր մտնել,
շրջադիպտի փէշերը հաւաքած՝ մինչեւ սրունք-
ները ցեխի մէջ կորած՝ նա բաղկում էր այս
կամ այն աշակերտուհու գուրդը: Նա մի ան-
գնահատելի գանձ էր դպրոցի համար եւ ամեն-
քը գիտէին ու ճանաչում էին նրա յարգը:
Միակ պակասութիւնը, որ նա ունէր—դա նրա
րնաւորութեան չափազանց մեղմութիւնն էր:
Ուսուցչական ծանր ու հազիւ տանելի կենանք
էր արդեօք տրոհել. մեղմաբեր նրան, որը—
մանկութեան օրերի աղեղնութիւնն էր ան-
ջինջ դրոշմվել նրա վրա,—ով գիտէ, այս միայն
յայտնի էր, որ օր. Մարիամը կուրծք, զիմա-
ղորդ ոյժ չէր—մի բան, որ շատ ու շատ կա-
րեւոր էր ուսուցչին:

Այդպէս չէր, սակայն, նրա փոքր քոյրը,—

կարողում են, արեւելք սկսում է վազել Սոս-
կալին այն է, որ ահագին բազմութեան մէջ
չէ գտնուում մի հատ մարդ, որ պաշտպան
կանգնէր խեղճ աղջկան Միակ խօսք հասկա-
ցնողները պիտի լինէին առեւտրականները. նրանք
էլ իրանց գրուելը ազատ պահելու ոչխարային
խոհեմութեամբ թողնում փախչում են քա-
ղաքը:

Թշուառ կիները անճարացած, հայրոջանքնե-
րի և դստակի սպառնալիքների տակ, կեան-
քերին ազատելու դիտումով, մի կերպ համա-
ձայնվում են արեւելք տեղերի մոգնած
պապկին, նպատակ դնելով հենց առաջին
առիթով փախել. աղջիկը կոյս է մնում մին-
չև վերջը Գաղաթում լուր տարածվելով գիւ-
ղում կատարված արեւելքի դրամայի մա-
սին, մի քանի երիտասարդներ միջամտում
են, հարսն ու հարսնեկները բերում են քա-
ղաք և գործը յանձնվում է տեղական գաւա-
ռապետին. բոլոր նշաններից երեւում է, որ
այս սոսկալի դրաման անպատճառ կատակե-
րական վերջաւորութիւն պիտի ունենայ,—այն-
քան շատ են սրտացաւ հացկատակ միջոցոր-
ներ:

Սոսկոււմը պտտում է մարդու, երբ մտա-
ծում է գիւղական հասարակութեան տգէտ,
անօգնական վիճակի և նրա արդիւնք գազա-
նութիւնների վրա. ինչ առհաստա-
յեայ ունեն, որ վաղը, Տէսիմոնները, զգլած
բոլոր այդ անցուդարձերից, դուրս չեն քի-
նանց իրանց կալուածներից. ափսոս չեն ա-
րին քրտինքով ճարված հարկերու որոշի-
ները, որոնք անչափ պիտի օգնեն իր անորոշ
ապագայի հետեւանքով առաջ գալիք նեղ ու
թշուառ օրերում: Վերջապէս ժամանակ չէ
սերնդի կրթութեան հոգ տանել, գոնէ որդի-
ները մէջ արմատացնել այն ճշարտութիւնը,
թէ կնոջ և կովի մէջ ահապին տարբերութիւն
կայ: Կինը էլ հոգի ունի, զգացում ունի, և չի
կարելի գոտով, հազար ու մի խաբարայութիւն-
ներով կնիկ դարձնել նրան: Ասենք, գիւղա-
ցին աղէտ է, բայց ինչ անուռ տալ այն վար-
ժապետ անուանեալ Զարըխանին, Կիւլիւ-
լեանին, որոնք մի քանի րուբլու, մի քանի
լոսֆ արագի համար գիտակցաբար քաջալե-
րում են և վատ ձգտումներն մէջ առաջնոր-
դում են ագէտներին և նոյն-իսկ զանալով
սպառնում մատաղ, անպաշտպան աղջկան:

Ինչպէս չը զգուշ մի քանայայտ, որ ոչ մի
արքութիւն չի ծանաչում, հարուստ է, կուռում
գայլի նման և ընդի պատկուտ է ընդդիմացող
աղջկան. ինչով արդարացիւն այն պարտքներին,
որ թողնելով օգնութեան կարօտ խեղճ կիները
մահվան երկիւղի մէջ փախչում են քաղաք,
ախուր ու զգուշի պատկեր:

Գիտենք, այս կողմնակի յանցաւորները օրէն-
քով ազատ են պատժից, բայց կայ մի տնեղ
դատաստան,—լրագրութիւն և հասարակական
անկեղծ կարծիք, որոնց ջննդատող, խաթող
դատաստանին դիմում ենք՝ մի քիչ հովանալու
մեր ցաւերից, մի քիչ կասեցնելու մոլորեցնող-
ներին և մոլորվողներին:

Սոյի Արլօ

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԳՐՈՒԹԵԱՆ

Կօլ. Աննէնֆելդ, (Գանձ, գաւ.)

Փետրվարի 10-ին
«Մշակ» № 21-ի մէջ Բանանց գիւղից գե-
տնդված է մի թղթակցութիւն, որի մէջ նա-
մակագիրը զգալի կերպով չափաւոր է իմ պա-
տիւր: Փանի որ այդ յօդուածը լի է զրպար-
տութիւններով և սուտ տեղեկութիւններով և
ունի ինսուլտացիայի կատարեալ կերպարանք,
ինչպէս են խոսնարար տեղ տաք «Մշակի»
էջերում այս իմ պատասխանին, որը փոքր ինչ
ուշացաւ, քանի որ «Մշակի» այդ համար օրե-
րումս միայն զէպք ունեցայ կարգաւոր:

Նախ և առաջ, ինչպէս պ. թղթակցի գրու-
թիւնից պարզ երևում է, պարտք բոլորովին
զաղափար չունի այսպէս անուանված գիւղա-
կան բժշկի (Сельский врач) պարտականու-
թիւնների մասին թղթակցի անելով գիւղա-
կան բժշկի պարտական է օգնութիւն տալ
Գանձակի գաւառի բոլոր գիւղերի ժողովրդին:
այն-ինչ Գանձակի գաւառը ունի մօտաւորա-
պէս 200 գիւղեր, և մի բժիշկ հազիւ թէ կա-
րողայ քերէ տարէն մի անգամ մի օր այ-
ցելել այդ գիւղերը...

Երկրորդ, պ. թղթակցի ասելով բժշկական
օգնութիւն Գանձակի գաւառի գիւղերին նաև
պարտական են տալ թէ գաւառական բժիշկը
և թէ մի-երկու ուրիշ (երեքի ուղում է ասել
նահանգական և նրա օգնական բժիշկները). այն-
ինչ իւրաքանչիւրը նրանցից ունի իր սեփական
պաշտօնական տարրութիւն: Իսկ գիւղական բ-
ժիշկի պարտականութիւնը կայանում է նրա-
նում, որ նա ընդհանուր է երթնել հիւանդնե-
րին (տարէնը մօտ 9000 հոգի) գիւղական հի-

ւանդանոցում, որը գտնվում է ոչ թէ Զեզաւ
կայարանում, ինչպէս գրում է թղթակցը, այլ
անա մօտ չորս տարի է, որ տեղափոխված է
գերմանական Աննէնֆելդ կոյնիսին:

Այլ և գիւղական բժիշկը արտաքոյ կարգի
դէպքերում առաջին օգնութիւն հասցնելու
համար ընդունում է, համաձայն կանոնադրու-
թեան, ստացիօնար հիւանդներին մի քանի
օրով, վերջապէս նա իրեն գաւառի սանիտա-
րական բժիշկ միջոցներ է գործ դնում համա-
ճարակների առաջն առնելու համար:

Պ. թղթակցը սկսում է և վերջապէս է իր
յօդուածը երկար ու ձիգ ճոռամարանութիւն-
ներով, աշխատելով ամեն մի քայլում վիրա-
ւորել իմ անձնաւորութիւնը և հաղորդելով
միանգամայն սուտ տեղեկութիւններ: Ահա ի-
րողութիւնը. նահանգական բժշկական վար-
չութիւնից ստացայ մի առաջարկութիւն այցե-
լել Բանանց գիւղը, ուր կարմրուկ հիւան-
դութիւնից մի քանի մահվան դէպքեր են
եղել: Հասնելով Բանանց գիւղը յունվարի տա-
սին, ըստ ցուցման գիւղական տանուտէրի և
ուղեկցութեամբ գիւղական քարուղւարի (որը
միաժամանակ գաւառական ֆելդշէրի պաշտօն
էր վարում) այցելեցի գիւղում եղած կարմր-
ուկով բոլոր հիւանդներին, դուայ նրանց ա-
ռողջանալու չըմանում, տուի հարկաւոր նա-
խապշտաւորական խորհուրդներ Կիւանդու-
թիւնը չը տարածելու համար: Նմանապէս գիւ-
ղական տանուտէրի խնդրանքը ամենայն յօ-
ժարութեամբ այցելեցի և այլ հիւանդներին,
որոնցից մինը, գիւղական տանուտէրի և քա-
րուղւարի կարծիքով, տիֆով էր հիւանդ, բայց
են որոշեցի մալարիա հիւանդութիւնը:

Գանձակ գաւառի գիւղական բժիշկ
Իսահակ Զուրաբեան

1) Սուտ է, իբր թէ ես ոչ մի հիւանդատիրոջ
չեմ թել տուել մտնել իմ մօտը խորհուրդի
համար: 2) Սուտ է, իբր թէ ես հրամայել եմ
զգրին հեռու քիչ ինձանից գիւղացիներին. այդ-
պիսի անփութ կարգադրութիւն ոչ ուղղակի
և ոչ կողմնակի կերպով ես պարզ չեմ իմ հա-
մարեա 12 տարվայ բժշկական գործունէու-
թեան ժամանակամիջոցում չեմ յիշում մի դէպք
անգամ, որ մերժած լինեմ որեւէ հիւանդի
օգնութիւն հասցնել: 3) Սուտ է, իբր ես քան
քայլ (sic!) տարածութիւնից հիւանդ եմ քննել,
վախենալով վարակելուց: Այս բոլորի վկայ
կարող են լինել տանուտէրը և գիւղական քա-
րուղւարը, եթէ չեմ սխալվում պ. թղթակցի
ազգականը: Գետաբեկի հիւանդանոցում, ուր
երկու տարուց աւել վերահսկել եմ հիւանդնե-
րին տիֆով շատ հիւանդներ եմ բժշկել, և ես
ոչ ճիշդ մեղադրանք չեմ լսած, որ երկիւղ
կրելով պարտականութիւնս չեմ կատարում:

Շարունակելով իր ինսուլտացիան, պ. թղթա-
կցը ի միջի այլոց ինձ եւ գիւղականուր և օ-
ժիտ որսող երիտասարդների շարքն է դատում:
Բայց այդ նպատակին հասնելու համար հար-
կաւոր չէր գիւղական բժշկի տաժանակի պաշ-
տօնը վարել, որը կարելիք տեսակետից ոչ մի
ապագայ չէ խոստանում, այլ միւս երիտա-
սարդների օրինակով անցնել Թիֆլիս և Բազու
կերպով չալտերով այս կամ այն անձին մի
շարք մահացու մեղադրանքներ:

Ի վերջոյ մի նկատողութիւն եւս. իմ կար-
ծիքով բանը նորանում չէ միայն, որ մարդ ճո-
ռամարանութիւններ անէ, բարձր գաղափարների
անուում խօսի, այլ պէտք է աշխատի իր
գործունէութեան մէջ կրքերից կուրանալով այդ
գաղափարները ուսանակս կանել, թեթևամիտ
կերպով չալտերով այս կամ այն անձին մի
շարք մահացու մեղադրանքներ:

Գանձակ գաւառի գիւղական բժիշկ
Իսահակ Զուրաբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօ օրերումս Թիֆլիսից ճանապարհ ընկաւ
դէպի Երևան՝ այնտեղից Պարսկաստան անցնե-
լու համար երկաթուղիական ծառայողները մի
խումբ, ինժեներ ֆերուլովի ղեկավարութեամբ:
Այդ խմբի ճանապարհորդութեան նպատակն է
հետազոտութիւններ կատարել երկաթուղու
չխուլթեան համար ռուսական սահմանագիծից
դէպի Թուրքի:

Հարց է բարձրացրած հիմնաւոր Պետերբուր-
գում առեւտրական պալատ, նման արտասահ-
մանեան նոյնպիսի հիմնարկութիւնների, որի
նպատակը պէտք է լինի ծանօթացնել ռուս-
ճառականներին արեւմեան չուկայի պայման-
ների հետ:

Խառնութիւնի կողմպառններ և գործութեան
դէպքերը հետզհետէ աւելանում են Թիֆլի-
սում: Այս անգամ չարագործները նպատակ էին
դրել կողպեղով վրաց ագնուականութեան
քարվանսարայում գտնվող Դէղուկեանի ոսկե-
ղէնի և արծաթեղէնի խանութը: Կիրակի,
փետրվարի 16-ին, երեկոյեան մօտ 7 ժամին,
այդ չարագործները, բարձրանալով քարվան-
սարայի կտուրը, ծակեցին Պատէլի խանութի
առաստաղը. գողացան այնտեղից 20 րուբլի, ապա
այնտեղից մօտս Մեանսիկեանի խանութը, որ-
տեղից յափշտակեցին 50 րուբլի, և այնտեղից

փորձեցին մտնել Դէղուկեանի խանութը՝ ոս-
կեղէն և արծաթեղէն ապրանքներ յափշտակե-
լու. բայց նրանց չափողից իրագործել իրանց
մտադրութիւնը: Խառնութի պահապանները,
լսելով չարագործների անգողչ աղմուկը, բռնե-
ցին երկուսին էլ յանցանքի տեղում:

Պետերբուրգում ստացված է Բերլինից գրա-
շարական նորանաւր մի մեքենայ, որ հնարա-
ւորութիւն է տալիս մի գրաշարի մօտ 10 հա-
զար տառ չարել օրական:

Երկուշաբթի, փետրվարի 17-ին, Թիֆլիսի
քաղաքագլխի պաշտօնակատարը ստացաւ Թիֆ-
լիսի նահանգապետից տեղեկութիւն այն մա-
սին, որ փետրվարի 10-ին կայացած դումայի
որոշումը քաղաքային ռուսաւարանական կօ-
միտէի գործունէութեան վերաբերմամբ չը
պէտք է կատարվի: Սրա հետ միասին նահան-
գապետը անհրաժեշտ է համարել աւելցնել,
թէ դումայի յիշված որոշման կատարումը դա-
դարեցրած է այն պատճառով միայն, որ նրա
մէջ քաղաքային ռուսաւարանական կօմիտէի
գործունէութիւնը ընդունվում է իբրեւ անընդ-
հատ շարունակելի:

ԿՍՂՁՈՒՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ թէից
սկսեալ տեղումս մի խումբ երիտասարդներ
միացած՝ նպատակ են ընտրել ժողովրդի մէջ
ընթերցասիրութիւն տարածել. նրանք հայերէն
լոյս տեսնող համարեա բոլոր գրութեաներից
ստանալով տարածում են ժողովրդի մէջ, իրանց
կազմած գրադարանից գրքեր են տալիս կար-
դալու ցանկացողներին, հայերէն լրագիր ու
սանագիր են ստանում միեւնոյն նպատակով,
խմբակն ընթերցանութեան են պարագում,
երբեմն էլ գրական-ընտանեկան երեկոյթներ են
կազմում ձրի: Ամսիս 12-ի երեկոյեան «Վար-
դանանց» ամսեայ յիշատակը յարգելու համար
նոյն խումբը մի գրական-ընտանեկան երեկոյթ
կազմեց: Մի երիտասարդ խօսեց գրականու-
թեան մասին, թէ նա ինչ դեր է խաղում
կեանքում. երգելիցին շատ երգեր ետաձայն և
այլն: Գրական մասը վերջանալուց յետոյ սկսվեց
պարերգութիւն մինչև գիշերվայ ժամի 3-ը,
երբ քաղմթիւ հանդիսականները քաղցր տը-
պաւորութեան սակ ցրուեցան: Աւելորդ չենք
համարում աւելցնել, որ հանդիսականները
լսելով օր. Վարսենիկ Տ. Մանուկեանի քաղցր
ձայնը, որ խմբի մէջ «սօջ» էր երգում, շուտ-
շուտ խնդրում էին, որ կրկնէ իր երգածներից,
իսկ օրերորդը, հանդիսականներին գոհացնելու
համար, չէր մերժում ոչ մի անգամ և իր քաղցր
ձայնով բաւականութիւն էր տալիս ամենքին:
Ուստի խումբը իր խորին չնորհալաւութիւնն է
յայտնում յարգելի օրերորդին:

ԿՍՂՄԻՑ մեզ գրում են. «Վերջին օրերս
կատարեմ հասարակութեան զբաղեցնում է մի
հասարակական խնդրագրի ստորագրութիւնը,
որ Եղիշ վարդապետ Մուրադեանի անձնա-
կան բարեկամներից մէկը խանութէ խանութ
ման է ածում ստորագրել տալու յանուն Վե-
նափառ Կաթողիկոսի, որ Մուրադեան վար-
դապետը եպիսկոպոս ձեռնադրվի: Եղիշ
վարդապետի անձնական բարեկամները շատ
են ցանկանում նրա եպիսկոպոսութիւնը և
դիմում են այդ տեսակ միջոցների: Երկու
տարուց աւելի է Մուրադեան հայր սուրբն
արդէն հեռացել է Կարսից և պաշտօնով ըն-
տրված է ուրիշ տեղի համար: Ակամայ հարց
է դարձնում. ինչ կապ ունի այժմ Կարսը Ե-
ղիշ վարդապետ Մուրադեանի հետ. ճիշտ է,
կարող են նրան մասնաւոր կերպով մի քանի
անձինք յարգել, բայց հասարակութիւնս յա-
մենայն դէպս այդպիսի խնդրագիր ստորա-
գրելու երբեք կարեւր չունի, ինչպէս և եղել են
ստորագրութեան խորհուրդը հակացող ոմանք,
որ մերժել են խնդրագիր ման ածող պարո-
նին:

ԱՅՄԱՅԻՆՈՒՄ մեզ գրում են. «Մեծ բաւա-
կանութեամբ լսեցինք, որ թեմական առաջ-
նորդի կարգադրութեամբ, Ախալցխայի հոգեւոր
կառավարութեան անդամի պաշտօնից արձակ-
ված է Մկրտիչ քահ. Գահնգէսեանը: Որովհետեւ
հասարակութիւնս այդ քահանային ճանաչում
էր իբրեւ հանգուցեալ երեցիփոխ Մ. Մուրա-
դեանի կատարած գեղծունէիներն համակրող
անձնաւորութիւն՝ ուստի և ուրախ է, որ նա
էլ ապարդիւց հեռացաւ:

ՎԼԴԴԻԿԱՎԻԿԱՅԻՑ մեզ գրում են. «Փետր-
վարի 13-ին թեմիս առաջնորդ Արիստակէս
արքեպիսկոպոսը, քահանայ ձեռնադրեց դպիր
Լևոն Տէր-Յովնանիսեանցին, անուանելով նը-

րան Սահակ Նորնծան աւարտել է Ներսիսեան
դպրոցը: Նրան Ստաւրօպօլի հայ հասարակու-
թիւնը քահանայ ընտրեց մի քանի թեկնածու-
ները միջից: Եկեղեցում ահագին բազմութիւն
կար: Ռուսներից շատերը ներկայ էին, որով
հետեւ նախօրօք տեղիս «Казбоек» լրագրում
յայտարարված էր:

ՎԱՐՇԱՎԱՅԻՑ մեզ գրում են. «Այստեղ հայ-
երի թիւը հետզհետէ աւելանում է: Բախտի
հարուածներից ստիպված, թողնելով ծնող, ըն-
տանիք, հացի խնդրի համար կամ թէ հարստա-
նալու նպատակով դիմել ենք Վարշավա. չիփ-
լով գլխաւորապէս լեհացիների հետ, տարիներ
ընթացքում գրկված ենք եկեղեցուց և քա-
հանայից և հոգեպէս կորած ենք համարվում:
Արժանի է ուշադրութեան և ցաւալի՝ որ նըն-
ջեցեալ եղած դէպքում, ով միջոց ունի քա-
հանայ է հրաւիրում Մօսկվայից կամ այլ տե-
ղից, որ ահագին ծախս է պահանջում: Իսկ մի-
ջոց չունեցողը մի որեւէ պատօրի կարճ ա-
ղօթքով ծածկում է հողի տակ իր սիրելուն:
Թէպէտ և այստեղ կան հայեր, որոնք եթէ ժո-
ղովարարութիւն անէին իրանց մէջ՝ մի կլորիկ
գումար կը կազմէր, որով կարելի կը լինէր
գոնէ մի հայ քահանայ ունենալ, որպէս զի
այսպիսի դէպքերում կարգը կատարէր: Այստեղ
մի բուռն հայեր կան, բայց դրանք միմեանց
միս և ոսկր են կրծում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վերջին օրերում, ինչպէս գրում են «Neue
Freie Presse» լրագրին 4. Օկտբր, մեծ վէպեր
առանձնապէս յաճախ խորհրդակցում է գեր-
մանական դեսպանի հետ, որ աշխատում է
համոզել նրան, թէ ռէֆօրմներ Մակեդոնի-
այում ոչ միայն անհրաժեշտ են, այլ և պէտք է
մտցնվեն առանց յետաձգելու: Գերմանիայի
գործողութեան խորհուրդաւոր եղանակը սակայն
տեղիք է տալիս զանազան բացատրութիւնների
միւս պետութիւնների կողմից, և այդ բացա-
տրութիւնները, ի հարկէ, նպատաւոր չեն
Գերմանիայի համար: «Köln. Zeitung», պա-
տասխանելով այդ աննպատակ խորհրդերին
Գերմանիայի վերաբերմամբ՝ առում է, թէ
սխալ է, որ իբր թէ Գերմանիան՝ զրդված
կայսրի համարութիւնից՝ զէպի Թիւրքիան,
դանդաղում է և պահում է իրան առանձին
միւս պետութիւնների խնդրերով վերջին-
ներին: Այդ բոլոր լուրերը, «Köln. Zeitung»-ի
ասելով, տարածվում են անբարեխաճօքէն
Գերմանիան,—առում է նա,—առաջինը եղաւ
պետութիւնների մէջ, որ յայտնեց իր լիուրի
համաձայնութիւնը Ռուսաստանի և Աւստրիայի
հետ: Գերմանիան ոչ մի հիւր չունի մակեդո-
նական հարցի մէջ բաժանվելու միւս պետու-
թիւններից, մինչև անգամ ի նկատ տանելով
իր համակրանքը դէպի Թիւրքիան, որովհետեւ
այս վերջինի շահերը պահանջում են, որ Բ.
Դուռը լսէ և կատարէ պետութիւնների խոր-
հուրդները:

—Ինչպէս հաղորդում է «Vossische Zeitung»
լրագիրը, բոլջարական պատգամաւորների ժո-
ղով օսոցիալիստ անդամները հեռագրով դիմե-
ցին ժօրէպի՝ խնդրելով պաշտպան հանդիսա-
նալ մակեդոնացիներին Ֆրանսիական պատգա-
մաւորների ժողովում մակեդոնական հարցի
վերաբերեալ վիճարանութիւնների ժամանակ:

—Սկօպիայից գրում են «Новъ Дневникъ»
լրագրին, թէ Սկօպիայի վիլայէթի բոլոր գիւ-
ղերում և նոյն-իսկ Սկօպիա քաղաքի միջիթ-
ներում հրաւիրվում են թիւրքերը բազմամարդ
ժողովներ, որոնց ժամանակ մօլլաներն և խօ-
ջաները արտասանում են կրակոտ ճառեր
գրգռելով ուղղահաւատներին դէպի պատե-
րազմ գեաւուրների դէմ: Ամեն բանից երե-
ւում է,—գրում է թղթակցից,—որ թիւրքերի
թշնամական վերաբերմունքը դէպի Բօլջարիան
դարձել է ընդհանուր: Թիւրքերը նրա վրա են
բարդում իրանց երկրի մէջ տիրող այժմեան
խառնակ դրութեան յանցանքը:

—«Paris Nouvelles» լրագրի ասելով, Ֆրան-
սիական հանրապետութեան նախագահ Լու-
րէի մեկնումը դէպի Ամերիկայի Միացեալ-
Նահանգները նշանակված է 1903 թւի յունիսի
15-ին: Տեսակցութիւնը Լուրէի և Բուզվէլտի
մէջ տեղի կունենայ Նոր-Օրլէանում, որտե-
ղից նրանք միասին կուղարկվեն Մէն-Լուիի
ցուցահանդէսը:

ՄՇԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՍՏԵՐ

ՌՈՒՄԱՅ ԳՈՐԾԱԿԱՂՈՒԹԻՒՆԻՑ
17 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Փետրվարի 17-ին Բարձրա-
գոյն ներկայութեամբ կայացաւ ճաշ էրմիտա-
ժում և ապա պարեր Պալիտիսի դահլիճում:
ՍՕՄԵՈՎԻՑԻ. «Сочиницкій Курьеръ» հա-
ղորդում է, թէ Ստարոկուսո ինժեներին
սպանելու փորձ անող բանուոր Բօցիանօս

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

(Նոր չրջան, III տարի)

1903 թվին «Մուրճ» տպվելու է. ի միջի այլոց Ա. Անարանյանի մի նոր մեծ վեպ «Մորիկ Սուրբ», շարունակվելու է Լեօն «Հայոց Գրականության» թարգմանվելու են Ա. Ա. Ուոլլեյի «Հրաշալի Դարը» և Զորայի վերջին «Ճշմարտություն» վեպը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ.—Ռուսաստանում տարեկան 10 ռ. Արտասահմանում 12 ռ. Կես տարին 6 » 7 » 20 Կ. 1 ամսվան 1 » 1 » 1 »

«Մուրճ» ամսագրին կարելի է գրվել. Թիֆլիսի ՄՈՒՐՃ—Խմբագրատունը (Ճալճալճալճալ փ., տ. № 16): Կայսրության այլ տեղերից պետք է գրվել Տիֆլիս, в редакцию журнала «Мурдж». Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Mourtech»

Բացի այդ, «Մուրճ»-ին կարելի է գրվել նաև Թիֆլիսի ՄՈՒՐՃ—«Ռուսաստանից» գրավճառահարցում ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ. Մ. Տեր-Նանդեյանի մոտ, Անգլո-արևելյան ընկ. գործարանում ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ. ընկերությունում գրավճառահարցում, Կրասնովոդսկայա և Տորգովայա փողոցների անկյուն, տ. Ամիրովի և պ. Ն. Դալեյանի մոտ, Շահգյուլանյանի պատասխ. «Վաստակ» ընկերության գրասենյակում:

Մանկավարժական, Ռուսաստանի բաժանորդներից նրանք, որոնք դժուարանում են տարեկան բաժանորդագրվել (10 ռ.) վճարել միանգամ, կարող են տալ մաս-մաս, սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.:

Խնդրում են ձեռագիրները և նամակները ուղարկել խմբագրության՝ Լեւոն Սարգսյանցի անունով:

ԻԻԶԲԱՇԵԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

(Բազու. Ստանիսլավսկայա և Բոլշակովայա փողոցների անկյուն, տուն Աշուկովի, Տեխնիկական ուսումնարանի նոր շինություն հանգեպ):

Սովորեցնում է երկրաչափական և աստղագիտական հիմնական մեթոդով. Պատրաստում է պետական բոլոր միջնակարգ դպրոցների երեք դասարանների համար Ա. Կարապետյանի 9—10 (Զ. Ն.)

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԴԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն Ա Փ Ե Ժ Փ Ա

Ժողովին, գեղարվեստական և գրականության մասին, ապրանքների անվտանգության և գույքերը կրակից ապահովագրելու համար:

Հիմնված է 1847 թ.ին

Հիմնական գրամագուլը 1,650,000 ռուբլի
Պահեստի գրամագուլը 2,664,803 »

1. Ա Գ Ր Ա Ն Գ Ն Ե Ր Ի Տ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ռ Թ Ի Ի Ն.

Ասելի քան 300 գործակալություններ երազական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի և հեռավոր Արևելքի բոլոր նշանավոր անդամներ, նոյնպես և ներկայացուցիչներ արտասահմանի գլխավոր ընդհանրություն:

Տեղագիտություն ամեն անգամ բնական և իրերի, որոնք ընդունվելու են յանձնադր կառավարվում է թե ամեն և թե պահանջներում ու խանութներում:

Յանձնադր բնական և իրերի կողմից առաջարկված պայմաններով (վերադարձ, մարտեր և հայր և զավակներ, գրամագուլ և արժեքներ) (переводы) բնական և իրերի համար և այլն):

Պահանջներ բնական և իրերի արժեքները պայմաններով ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

II. Ն Ա Ի Ա Գ Ն Ա Տ Ի Թ Ի Ի Ն

Սեփական մարդասիր, ապրանքատար և ձգող շոգենակեր, ծովային և գետային նավեր (70 նավ):

Բնական և մարդասիր նավերի պարբերական հաղորդակցություն Վոլգա գետի բոլոր նավատնակների միջև, Ռիբինսկից մինչև Աստրախան, և Կասպից ծովի բոլոր նավատնակների միջև, Աստրախանից մինչև Կարակումսկի և Կարակումսկի անկյուն:

Ամենամեծ և ամենամեծ անվտանգություն (սեփական նավատնակային վրա), Աստրախանում, Բաքուում և Կրասնովոդսկում:

Բնական և մարդասիր նավերի արժեքները պայմաններով ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

III. Ա Գ Ա Ն Գ Ն Ե Ր Ի Տ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ռ Թ Ի Ի Ն.

ա) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

բ) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

գ) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

դ) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

ե) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

զ) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

է) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

ը) Ապահովագրություն բնական և իրերի, որոնք անվտանգություն են թե ամենամեծ անվտանգությունը նրանց պահանջներում, որի համար շատ կենտրոնում կան ընդարձակ պահանջներ, յանվապես բնական և իրերի համար:

ԷԺԱՆ ԳՆՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ

Ան մի գրող ձեռք, 6 տարեկան, 4 1/2 վերջով, առանց պակասության ձեռքերը բերված են Ռուսաստանից: Վաճառվում են նաև զանազան կառույցներ, արտասահմանում չենված: Տեսնել կարելի է ամեն օր 9—2 ժամը, Վոլգա-Վոդայայա № 18. գալիս. հարցնել կազմակերպչին և էկզկուսորին ձեռքերը պատկանում են գեներալ Կարապետյան 1—3

Խնդրում են ամեն օրը սիրողներին, որոնք մասնակցեցին այս տարի ժողովարանում տեղաված ներկայացուցիչներին, չնորհ բերել նոյն ժողովարանը չորեքշաբթի, փետրվարի 19-ին, երեկոյան 6 1/2 ժամին իմ հայրը ուսուցելու և ապագայի մասին խորհրդակցելու համար: 2—2 Իլյա Մ. Թուրանյան

Լույս տեսաւ

Մ. Վ. ՏԵՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆԻ

ИСТОРИЯ ПЕРЕВОДА БИБЛИИ НА АРМЯНСКИЙ ЯЗЫКЪ

С.-Петербургъ, 1902. Цѣна, 3 руб.

Վաճառվում է Թիֆլիսում Կենտրոնական և Գուտտենբերգ գրավճառահարցներում և Էջմիածնում՝ հեղինակի մոտ: 2—5

Լ ո յ ո տ ե ս ա լ

Ա. Ե. ԱՍՄԱՆԻ

Ա Ր Ի Ի Ն

(Գրական բարձրագույն)

Գինն է 10 Կ.

Պահեստը «Գուտտենբերգ» գրավճառահարցում 2—5

Բ Ժ Ե Կ Ա Գ Ն Ց

ԳՐ. ԻՎ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

Կերպեր և երկամաների հիմնականությունները Ընդունում է առաջին 10-ից մինչև 11-ը և 5-ից մինչև 7 ժամ երեկոյան Միջնակարգ դպրոցներում 154, Տեղագիտություն 30—30

ԲԹԻՇԿ Ա. ՄԻՍԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնավորապես սիրողներ, մորթում և վերաբերական ախտ ունեցող հիվանդներին: Բիթիկ-ՄիսիթաՐեանյան կարիքներ, որոնք ընդունվում են կաթի, խորխի, մեղրի և արեան անալիզները:

Առաջին 11—1 ժ.

Երկրորդ 4—6 ժ.

Բերդաբայա փողոց № 41. տուն Արաբաբեյան Բոբուտովսկայա Մ. № 41. Домъ Арабабейанъ. 58—150

Բ Ժ Ի Ե Կ

Պ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ

կազմում է խորհուրդներ տեղիս պրոֆեսորների հետ՝ Վիեննա եկող հիվանդների համար:

Dr. Med. Paul Afrikan. Wien. VIII., Langgasse, 60, Thur 1. 11—15

ՀԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՊԱՐՄԵՅ ԾՈՅԻ

ՁԵԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարեկան ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկություններ Պարսից ծոցի առևտուրի մասին, զենքի ներկայացուցիչներ Կարապետյան Պարսից ծոցի նշանավոր կենտրոններում, ընդունում է յանձնարարություններ, գնում և վաճառում է ապրանքներ, փխբաբերում է Երազմայից Պարսից ծոցի և Պարսից ծոցից Նուրա, զիբրամաշիկի պայմաններով: Հասցեն. Zeytoon C. G. Buchier Persian-Gulf. 72—100

Թեան ուղղի բառարանում, իրաւունքներ իւրաւանափակումով:

Կ. ՊՈԼԻՍ, Ձերնագործային ղեկավարը վերադարձաւ արձակուրդից և ընդունվեց սուլթանին: Լուրերին նայելով՝ սուլթանը գոհութիւն յայտնեց Ձերնագործային ղեկավարին և բարեկամական գործունէութեան առիթով և յանձնարարեց չնորհակալութիւն յայտնել Նիկոլայ Իլյանին:

Օսմանեան բանկին յանձնարարված է մշակել կանօններ, որոնցով պէտք է վարվի իր պարտականութիւնները կատարելիս մակեդոնական երեք վիլայէթներում: Այս կանօնները կը ներկայացնուին ուսուց և աւտորիական դեսպաններին հաւանութեան Դեսպանները կը մշակեն հրահանգ հիւպատոսներին համար՝ հակելու ընթերցաների գործադրութեան վրա: Հիւպատոսները հաղորդում են, որ իբրեւ հետեանք սուլթանի րէֆորմները ընդունելուն՝ ձեռք է զարկված ներումը իրագործելու:

ԼիւնԱՌԻ. Այստեղ ժամանեց պրինցուհի Լուիզան և ընդունվեց մօրից: Նա իջաւ էրջ-էրջօգ մերդնանդին պատկանող վիլայետը: Պրինցուհուն ուղեկցում է Պետեր փաստաբանը: ՄԱԳԻՐԻ. Ինչպէս հաղորդում են Ցեռութից՝ մարերի ընկած չրջանում տիրում է կատաղեալ անիլիանութիւն: Կարիները հրաժարվում են հարկերը վճարելուց և կողոպտում են այն ցեղերին, որոնք հաւատարիմ են մնում սուլթանին:

18 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՐԴԻ. Սակաւն-Վէյմարեան մեծ շքութեան և Սակաւն-Ալտերուրեան շքութի մօտ եղած մինիստր ընդդէմն հօֆմէյստէր Բաբս Բուրգերը նշանակվում է դեսպան Վիր-մէմբերգի թագաւորական արքունիքում:

Սկսեց տպագրվել քաղաքացիական ֆինանսների մինիստրի ամենապատակ զեկուցումից նրա ճանապարհորդութեան մասին դէպի Հեռավոր Արեւելք:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Այստեղի ղեկավարող չրջաններում տեղեկութիւն է ստացված, թէ Բրազիլիան Բոլիւիայից պահանջում է, չը նայելով որ վերջինս արդէն իրագործել է Ակրայի հողի վերաբերեալ պահանջը, զիջել դարձեալ հող՝ 34,440 քառակուսի մղն տարածութեամբ, ապառնալով այդ հողը գրաւել գործով:

ԴԱՐՄՇՏԱՐ. «Darmstädter Zeitung» հաղորդում է, թէ մեծ դուքսը ապահով հասաւ Սուէց:

ՄԱԴԻՐԻ. Մեկիլայից հաղորդում են, թէ թեկնածուն, որ սակաւաթիւ համակրողների հետ ամրացել էր՝ չըլապատված է այժմ:

ՊԵՏԵՐԲՈՐԴԻ. Ամբողջ արևմտեան Պենսիլվանիան հեղեղված է: 56 գործարան դադարեցրին գործերը. 38,000 բանւորներ առանց գործի են մնացել:

ՍՕՅԻԱ Բոլգարական բոլոր փոխառութիւնների կօմիտէիսան երեկ այնպիսի նստաչրջանին կառավարվի ժողովին:

Կառավարութիւնը պայմանագիր կապեց ռուս-գարական և դոնայեան ընկերութիւնների հետ, որոնք ապրանքներ և ուղեորներ են փոխադրում Դոնայի վրայով: Պայմանագրութիւնը կը սկսէ գործադրվել մարտի 1-ից:

Ամբողջ Բոլգարիան պատրաստվում է հանդիսապես ամեն փետրվարի 19-ին՝ իր ազատութեան քանակինգամակը ուսուց Թագաւորի և Ժողովրդի կամքով:

Խմբագիր՝ ԱԼԻՍԱՆԴԵՐ ԲԱՆԵՐԱՐԻ

Հրատարակիչներ՝ ԹԱԿՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յով. Արամեանցի հրատարակութեամբ լոյս տեսաւ:

Ե. Թ Ո Փ Չ Ե Ա Ն Ի

կազմած յայտնի մարդկանց կենսագրութ. 6-րդ գրքովը

Մ Ե Շ Ն Ն Ե Ր Ս Է Ս

Գինը 10 կօպ.

Դիմել՝ Պետերբուրգ Կսկայա 38. Արամեանց. — Բաքու, Կ-Յ «Սոմեթուս». — Թիֆլիս, Տերգիւսկայա 8, Ս. Աբրամեանց. 3—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ս Ի

Ա. ԱՀԱՐԱՆԵԱՆԻ

Մ Ա Յ Ր Ե Ր Ը

(Պատմաւոր)

Գինն է 15 կօպ.

Դիմել՝ Գուտտենբերգ գրավճառահարցին և հեղինակին. Թիֆլիս, Րեդակցիա «Մուրճ».

6—10

СЪВЕРЪ 24 КНИГИ СОБРАНИЯ СОЧИНЕНИЙ Вс. С. Соловьева. В 1933 году г. подписчики получат БЕЗПЛАТНО. 52 №№ роскошно иллюстрированного журнала, в котором будет печататься новый интересный роман г. В. А. Салиаса «Ловеласъ»; 52 №№ жемчужины политической и общественной жизни; 12 №№ журнала «Парижские Моды. Хозяйство и Домоводство», со множеством рисунков и полезных указаний; 12 №№ выкройки на отбывших больших листах. Кроме всего этого, годовые подписчики получат большую картину проф. Ю. Ю. КЛЕВЕРА «ВЕЧЕРНЯЯ ЗАРЯ». Размѣръ картины, отпечатанной масляными красками, 12х18 верст. В отдельной продажѣ цѣна этой картины 5 руб. ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ безъ дост. въ СП. — 6 р., съ дост. и перес. 7 р., на 6 м.—3 р. 50 к., на 3 м.—1 р. 75 к., за границу—11 р. РАЗСРОЧКА доуказывается по полугодиямъ и четвертямъ года. Подписчикъ проситъ адресовать на имя редактора-издателя Вик. Фед. Мертца. (СПБ. Невскій, 170).